

Լ. 2. ՇԵՆՈՑԱՆ

ՀԵՎԱՓՈԽԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ ԲԵՀԱՋԻՆԻ «ԱՅՍ ՊԱՐՈՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ», ՎԻՊԱԿ-ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Այսօրվա Իրանը բանտում պետք է ճանաչել»։ Այսօրվա՝ ասել է թե 70-ական թվականների սկզբի, երբ Իրանի անվտանգության մարմինների «բարեհաճությանը» արգի պարսից արձակի նշանավոր վարպետներից Մոհամմադ էթեմադդեհեն (Բեհազին) «հյուրընկալվում էր» Թեհրանի բանտերում, որտեղից ստացած իր տպավորություններից, ապրումներից, հանդիպումներից ու խոհերից պիտի գրեր իր «Հարսիկն», «Այս պարոնների հյուրը» վիպակ-հուշագրությունը¹։

Նրա բանտարկության առիթը պարսիկ մի այլ հանրաճանաչ գրողի՝ Ֆերեյդուն Թոնթաբունիի ձերբակալությունն էր²։ Այդ ձերբակալության դեմ բողոք-հայտարարությամբ հանդես էր եկել «Իրանի գրողների ընկերությունը» այն ուղղելով վարչապետին, դատախազին ու մի քանի այլ պաշտոնատար անձանց, Բողոքի տակ ստորագրել էին 54 գրչի մշակներ։ Այս փառսն իսկ մեկն է այն պատմական բազմաթիվ վալեբրացումներից, որ Իրանի 30-ական թվականների պատմությունը իր հայտնի ախուր ու դաժան դրսևորումներով կրկնվում էր։ Երեք ու կես տասնամյակ առաջ պատմության սև էջերի առաջին օրինակը գրել էր հայր միապետը՝ Ռեզա Փեհլևին, դաժան հաշվեհարդար տեսնելով Իրանի առաջադիմական, դեմոկրատական մտքի առավել աչքի ընկնող ներկայացուցիչների հետ։

70-ական թվականներին բողոք-հայտարարություն էին գրել 54-ը, իսկ 30-ական թվականների կեսերին՝ շահական զնդաններն էին նետվել երկրի հասարակական խիղճը մարմնավորող 53 դեմոկրատ-մարտիկներ, որոնցից Թաղի էրանիի, էհսան Թաբարիի, Բոզորգ Ալավիի անվան հետ են կապված 30-ական թվականներին Իրանում բռնության, հետադիմության դեմ պայքարի բազմաթիվ հերոսական էջեր։ Հայրենիքի առաջընթացի այդ 53-նվիրակներին գործի արժանի գնահատա-

կանը տվեց գրող-հրապարակախոս, նրանց զինակից և բանտակից ընկերը՝ Բողոք Ալավին։ Նա իր «Փանջահո սե նաֆարը» (53 հոգի) գրեց արդեն 40-ական թվականներին՝ երկրում դեմոկրատական շարժման վերելքի տարիներին, ապագա սերունդներին թողնելով դոկտոր էրանիի և նրա համախոհ-գինակիցների վավերական դիմանկարները³։

Կրկնվել էր պատմությունը։ Իրանի ամերիկյան տեխնիկայի վեր-շին խոսքով սարքավորված բանտերում էին արդեն այն սերնդի որդիները, որոնց լավագույն ապագայի համար մղած պայքարի առաջամարտիկներն էին 53-ը։ Պատմությունը կրկնվում էր անգամ մանրամասնեցողով։ Հայր միապետի 30-ական թվականներին ձեռնարկած բարեփոխությունները և 60-ական թվականներին որդի-միապետի բարեփոխությունները, որն այս անգամ արդեն արմատականություն հավակնող իր ընդգրկումներով, անողոք էր դրանց վերաբերմամբ դրսևորված մտքի ու գործի ամեն կասկածի ու քննադատության վերաբերյալ։

Հարազատ ժողովրդի դաժանորեն կրկնվող պատմության նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ իրանական 1905—1911 թթ. հեղափոխությունից ի վեր դեմոկրատիայի, ազատության հակաիմպերիալիստական պայքարի գեղարվեստական իմաստավորման արդեն կեսդարյա փորձ կուտակած առաջագիմական գրականությունը։ Փորձին արժանի իրատեսությունը նրա ներկայացուցիչները ընկալում և գեղարվեստորեն վավերացնում էին այն սուր հակասությունները, որոնք շրջելու, բթացնելու նպատակին էր ուղղված «Դեպի մեծ քաղաքակրթություն» աղգակոչով 60-ական թվականներին իրագործվող սոցիալ-ռեֆորմիզմի քաղաքականությունը։ Ավելին, նրանք հաշտության բացահայտում էին այն նոր սոցիալ-տնտեսական, բարոյական հակասությունների հանգույցները, որոնք շերտագրվում էին կապիտալիստական զարգացման ուղին ոտք դրած, բայց քաղաքականապես չնորացած հասարակության հին վերքերին։

Մեծ ջանասիրությամբ պրոպագանդվող բարեփոխությունների, նավթադուրների բումի, «2500-ամյա մեծ Իրանի» փառաբանման աղմկոտ մթնոլորտում երկրի առաջագիմական մտքի ներկայացուցիչները քաղաքացիական անզիջողականությամբ պատկերում էին այն ծրագրավորված խափանումները, որոնք թաքնված էին բարեփոխումների դեռևս նոր գործադրված մեխանիզմում։ Այս թեմային էին նվիրված արդի Իրանի աչքի ընկնող արձակագիրներ Ֆ. Թոնբարոնիի, Խ. Շահանիի, Ա. Ֆադիրիի, Մահմուդ Դովլաթաբադիի, Ահմադ Մահմուդի մի շարք պատմվածքներ⁴։

եմ ծնվում են «Հաբսիենները», այս անգամ արդեն XX դ. երկրորդ կեսի «Հաբսիենները»: 70-ական թվականների սկզբին պարսից գրականությունը հարստացավ այդ ժանրի երկու ստեղծագործությամբ:

Պատմության դասերի գիտակցությունից ներշնչված դիմակայունությամբ էր համակված Մեհդի Ահադան Սալեսի (Օմիդ) «Տասներկուերորդ պարագրաֆ» ստեղծագործությունը, որն ունի «Պոեմ հյուսված բանտային հուշերից» ենթավերնագիրը: Պոեմում ընկերների վերաբերյալ բանաստեղծի հուշերը միջարկվում են նրանց հետ իր երևակայական գրույցով: «Սիրահարը՝ սերը, իսկ ես կյանքն եմ ճանաչում» սրտի ու մտքի կշռույթով իրանի 70-ական թվականների բանտային կյանքի ճանաչողական արժեքը այսպես էր բանաձևում պոեմում Օմիդը:

Նրան երկրորդում էր Մոհամադ էթեմադզադեն (Բեհազինը) իր «Այս պարոնների հյուրը» վիպակ-հուշագրությունում, որի վավերական էջերը համոզում են, որ Բեհազինի եզրակացությունը ըստ ամենայնի հիմնավոր է: Այդ մեկնակետով առաջնորդվելով, հեղինակը կարողացել է այնպես համոզիչ և համակողմանի ներկայացնել բանտում իր տեսածն ու լսածը, որ ընթերցողը ևս ընդգրկուն պատկերացում է կազմում հասարակական-քաղաքական այն տրամադրությունների մասին, որոնցով ապրում էր երկիրը, այն սոցիալ-քաղաքական լիցքերի մասին, որոնք 70-ական թվականների սկզբին իրանը հասցրել էին հեղափոխական իրադրության նախադռանը:

Վիպակը օրագրության բնույթ ունի, որի նյութը, սակայն, օրավուր գրառված տպավորությունների կանոնիկությունը չունի: Բանտային առօրյան նրա օրակարգային մանրամասները, որոնք ներկայացված ու իմաստավորված են հեղինակային խոհաքնարական, երբեմն էլ, ըստ տեղի, սարկաստիկ կամ հումորով արված դիտարկումներով, ստեղծում են այն բնորոշ, կենդանի մթնոլորտը, ուր ծավալվում են դրսի աշխարհից կտրված, բայց այդ աշխարհով ապրող բանտարկյալների հույզերը, պարպվում է նրանց հաճախ ծայրաբեկ հայացքների «վառուդը»:

Վիպակում հաջող է գտնված նաև ճանաչողական նյութի ներբերման ձևը: Միևնույն խմբավորման կամ կուսակցության պատկանած բանտարկյալները իրենց «կոմունաներն» են ստեղծել: Ճաշի, թեյի սեղանի շուրջ հավաքվում են նրանք ու «կոմունայի» հյուրերի հետ անշտապ գրույցներում բացում իրենց սիրտը, մտքեր են փոխանակում, վիճում: Առաջին իսկ էջերից զգացվում է ղեալիստ գրողի մեծ փորձառությունը, մանրամասների միջոցով տիպականը, բնորոշը պատկերե-

լու կարողութիւնը: Դրողը սոսկ թվարկում է իր մենախցի պատերի մակագրութիւնները, և ընթերցողին պարզ է դառնում, որ բանտարկյալների ճնշող մեծամասնութիւնը երիտասարդութիւնն է, հատկապես ուսանող երիտասարդութիւնը⁶:

«Վարդան Ստեփանյան, Ռեզա Բարահման, Հոսեյն Լոթֆաբադի, Նուշիրվանփուր: Սա՝ տնտեսագիտութիւն ֆակուլտետի ուսանող, այն մեկը՝ արվեստագիտութիւն, մյուսը՝ մանկավարժական ինստիտուտից, այս էլ պոլիտեխնիկից»⁷: Հետո գրողը իր մենախցի լուսամուտի ճաղերին կառչած բակից կլսի նրանց մարտաշունչ երգը՝

էյ, ընկերներ, հերոսներ,

Կյանքներս տանք հայրենիքին անվարան⁸:

Մանրամասն գրույցներ կունենա նրանցից շատերի հետ, ու այդ գրույցներից նրան կպարզվի մի նոր աշխարհ՝ 60-ական թվականների Իրանի երիտասարդութիւն աշխարհը, իր խռովքներով ու ձգտումներով: Այս ձգտումներին ու խռովքներին ի տես՝ գրողը կխորհի. «Ի՞նչ մօխող է այս իշխանութիւնը: Անհեռատես դաժանութիւն, որ բանտի մեջ է ներփակում իր հասարակութիւն ծաղիկը, հասարակութիւն ապագան: Փակում է, որովհետեւ այլ են իր և նրա՝ ապագայի պատկերացումները:

Բայց այլազան ու տարբեր են նաև իր իսկ երիտասարդութիւն պատկերացումները երկրի ապագայի, այդ ապագան տանող ուղիների վերաբերյալ, ինչպես որ բազմաշերտ են նրա ներկայացուցիչները՝ առևտրականներ, բարձր գինվորականութիւն ներկայացուցիչների զավակներ, բանվորներ, արհեստավորներ, գինվորական ծառայութիւնից խուսափած երիտասարդներ: Նրանք այդ տարիներին երկրում և արտասահմանում գործող տարբեր կուսակցութիւնների, խմբավորումների, արհմիութենական կազմակերպութիւնների երեմնի անգամներ են: Եվ նրանց գրույցներից ու վիճարկումներից ներկայանում է այն տարանջատվածութիւնն ու պառակտվածութիւնը, որով 60-ական թվականներին բնորոշվում էին իրանական հասարակական-քաղաքական շարժումները:

Հեղինակի հետ գրույցելիս «Արտասահմանում Թուղե կուսակցութիւն հեղափոխական կազմակերպութիւն»⁹ հետ իր ունեցած տարաձայնութիւններն է պարզում այդ կազմակերպութիւնից հեռացած ուսանողը: Դրանք վերաբերում են «Իրանի քաղաքական իրադրութիւն, հեղափոխական պայքարի հնարավորութիւնների ու ձևերի գնահատմանը», ասել է թե հեղափոխական շարժման հարցերի հարցին: Ի դեպ,

այս հարցերին էին առնչվում բուն իսկ «Թուղեի» հետ նրա երիտասարդական սեկցիայի անդամների տարաձայնությունները, որոնք և հիմք դարձան կուսակցությունից նրանց հեռանալուն¹⁰:

Երիտասարդն իր կազմակերպության կողմից գործուղված է եղել Զինաստան, ու նրա զրույցներից ակնհայտ է դառնում այն ազդեցությունը, որ մատյականությունը ունեցել էր արտասահմանում ծավալված իրանական երիտասարդական շարժման, նրա տարբեր խմբավորումների վրա: Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների անունից հանդես եկող ուսանողը, առանց իսկ դույզն կասկածի կրկնում է «Կուբայի տնտեսությունը միայն շաքարին կապելու», «Իսֆահանի մետալուրգիական գործարանը դիտավորյալ հումքից զուրկ վայրում կառուցելու» մասին մատիստական պրոպագանդայի կողմից ժամանակին տարածվող հակասովետական մտացածին մեղադրանքները¹¹:

Արտասահմանում և երկրի ներսում գործող զանազան ընդդիմադիր կուսակցությունների (կազմակերպությունների) և խմբավորումների տեսակետից ըստ ամենայնի ներկայացուցչական է բանտարկյալների քանակակազմը: Ընթերցողն այստեղ հանդիպում է և՛ Քուրդիստան օսթանների (նահանգների) դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներին, «Իրանի ժողովրդի կուսակցության» (Հեզբե մեճլաթե Իրան¹²) հիմնադիր Դարյուշ Ֆորուհարին ու այլ պանիրանխսանների, «Իսլամի ժողովուրդների կուսակցության» (Հեզբե մելալե էսլամ), «Իսլամի մարտիկներ»-ի (Ֆեղայանե էսլամ), «Զինվորական կազմակերպության» (Սազեմանե Նեզամի) երեքմեի անդամներին:

Բեհազինը այդ գործիչներին պատկերում է ոչ միայն ինքնաբեռութագրման հնարքով, նրանց խոսքի կամ գործողության միջոցով: Հաճախ և հաջողությամբ նա դիմում է նաև կենդանի մանրամասներով գծվող դիմանկարի կամ հեղինակային բնութագրման միջոցներին: Օրինակ, պանիրանխստների առաջնորդ Դարյուշ Ֆորուհարը հեղինակային բնորոշմամբ «ինքնավստահ ու անշտապ է» պահում իրեն: Դիպուկ բնորոշում: Բահրեյնի ինքնորոշման խնդրում կառավարության քննադատությամբ հանդես եկած և այս հոդվածի վրա պառակտման հասած կուսակցության հիմնադիրը կարիք ունի իր պարտության դառնությունը «հպարտ ու վստահ» պահվածքով թաքցնելու: Բայց նրա կոտրվածությունը դրսևորվում է անուղղակի: Երիտասարդ բանտարկյալների երգի՝

«Թե մեր պայքարն արյունով ողողվի, ճամփից ետ չմնանք,
Ոչ մի քայլ չընկրկենք, մինչև վերջին շունչը մահվան»

խոսքերին ունկնդիր Ֆորուհարը դառնորեն նետում է. «Ահ, նորից նույն լրեֆները: Տեսանք, թե այդ հերոսական ընդվզումները ինչ խայտառակ վերջ ունեցան»¹³: Ներքին մենախոսությամբ հեղինակը նկատում է. «Ամեն շարժման մեջ էլ կա այս սխալմամբ եկածներից (ուղեկիցներից—Լ. Շ.): Գալիս են, գնում, հակահարված ստանում, ծթե շարժումը կենսական արմատներ ունի, կենդանի կմնա ու կաճի, նոր ուժ ներառելով, նման այն գետին, որ առվակներից է սնվում»¹⁴:

Բանտը կոտորում էր շարժման ուղեկիցներին, պատահմամբ եկածներին: Հեղինակը ընթերցողին հանդիպեցնում է այդպիսի մի քանի յուզեկիցների: Բանտի ավագ տեսչի բնորոշմամբ, դրանք «այն հիփի-միփիներից են», կամ բրիգադային զեներալի կամ՝ դիվիզիայի հրամանատարի տղա, որ հարել են շարժմանը «իրենց ցույց տալու» համար: Միջնադարյան ինկվիզիցիայի կտտանքները հիշեցնող բանտային խոշտանգումները (դրանք հեղինակը նկարագրում է զուսպ, դեպքից դեպք ներկայացվող փաստերով, դրանով խուսափելով ճնշող նատուրալիզմից) կոտորել, խեղել են բանտարկյալներից մի քանիսի անձը, բանալանությունը:

Արցունքն աչքերին իր անմեղության մասին զրույցներով շրջապատին. ձանձրացրել է զինապահեստի պայթեցման մեղադրանքով բռնված շինարար բանվորը: Շրջապատին ու իր վիճակին անհաղորդ քարկտիկ խաղացող մանկան է վերածվել օդահենության ձախողված փորձի մասնակից ուսանողը: Բանտարկյալներին սարսուռ է բերում «Ծղլիա Մկրտչի» կերպարանքով դատապարտյալի՝ բանտով մեկ թընդացող երգի ձայնը. «Ճակատագրի փողոցի դարբինները շարունակ շղթաներ են կոում առյուծների համար»: Բանտարկյալների ճնշող մեծամասնությունը, սակայն, առյուծի պես արժանապատվությամբ է կրում իր շղթաները, նախապատրաստվում գալիք պայքարին: Նրանց հուզում են հատկապես ապագա հեղափոխության շարժիչ ուժերի հետ կապված խնդիրները: Հակասական, հաճախ իրարամբերժ են այս առթիվ բանտարկյալների կարծիքները, կարծիքներ, որոնք ժամանակի զանազան տեսությունների հաճախ շմարսված, մակերեսային ընկալման վկայությունն են:

Հարցի առթիվ ծագած վեճում նրանցից ոմանք այն կարծիքին են, թե «Այսօրվա դրությամբ, աշխարհում ոչ միայն հեղափոխության ուղեղը, այլև շարժիչ ուժը մտավորականությունն է» ու, «որպես հաստատում իրենց տեսակետի, միաժամանակ վկայակոչում են Մաո, Կաստրո, Չե Գևարա անունները: Ուշագրավ է բանտարկյալներից մեկի

առարկությունն այս տեսակետին: Նա ըստ էության ճիշտ է ընկալում Զե Ղևարայի պարտության պատճառները՝ դուրահավատություն, շտապողականություն, ընչազուրկ զանգվածներին համախմբելու և իր եսակից տանելու անկարողություն:

Կաղափարների այս բազմաձայնությամբ նրանք քննում են իրանում հեղափոխական շարժիչ ուժի առկայության խնդիրը, ջանում են պարզել՝ գյուղացիությունը, թե պրոլետարիատը կարող է լինել ռիանում հաղթական հեղափոխության շարժիչը:

Նրանցից ոմանք այն կարծիքին են, թե ռիանի պրոլետարիատը չի կարող շարժիչ ուժ լինել, քանի որ սոցիալական ապահովագրությունը, զանազան արտոնությունները ամբողջովին փշացրել են բանվորներին, և գործը պետք է սկսել գյուղից»¹⁵:

Դյուղում ապագա հեղափոխության լիցքերի առկայության կողմնակից բանտարկյալների ընդարձակ փաստարկներում 70-ական թվականների սկզբին արդեն մեկ յոթնամյակի լինելություն անցած ռեֆորմներին՝ գյուղացիությանը բերած արդյունքների սթափ գնահատական կա, դրանց հետևանքով գյուղում և քաղաքում ծնունդ առնելիք նոր հակասությունների կանխատեսումը:

Այն, մի կտոր թուղթ են տվել ձեռքները (գյուղացիների—Լ. Շ.) որպես պայմանագիր: Դիր կօր մեջ ու ջուրը խմիր: Դեռ մինչև 15 տարի որպես հողի արժեքի մարում, կալվածատիրոջը պիտի բերքի մաս տան: Իրենց բաժին 2—3 հեկտար հողի համար տոկոսն էլ չեն կարող վճարել: Դրամագլուխ էլ չունեն: Ստիպված ընկնում են պարտքի տակ, բանկին լինի, բերքը արմատի վրա գնողին, թե գյուղի վաշխառուին, տարբերություն չկա: Ի վերջո հողը լքում, գալիս են քաղաք, գործի հույսով, որը չկա, կամ առնվազն մեծ մասի համար չկա: Որոշ ժամանակ ուզածիդ պես դռնեդուռ քարշ գալուց հետո, հենց որ քաղաքի հեքիաթի ճշմարտությունը հասկացան, դառնում են դեպի հողը, որից օտարացել են: Քաղց, հուսահատություն»¹⁶:

Ոչ պակաս ճանաչողական արժեք ունի իրանի պրոլետարիատի հեղափոխականությունը ապացուցելուն հետամուտ երիտասարդ բանտարկյալի խոսքը: Նա բռնկված համոզում է, թե պետք չէ կուլ տալ իրանում «աշխատանքի և կապիտալի անտագոնիզմի վերացման» մասին պաշտոնական պրոպագանդայի կողմից ջանադրաբար հրամցվող սուտը:

«Ուրեմն,—հեզնանքով նկատում է նա,—որպես մեկ դասակարգ, պայքարից այլևս ձեռք են քաշում... Նվ դուք դրան հավատում եք»:

— Բանն էլ այն է, որ տեսնում ենք:

— Կրանի իշխանությունը ևս ձեզ պես տեսներ ու այս բոլոր ճնշումների, ձերբակալությունների ու բանտարկությունների համար պատճառ չգտնեք»¹⁷:

Խիստ ուշագրավ է բանավիճողներից մեկի դիտողությունը, որն ըստ էության բացահայտում է 60-ական թվականների վերջերին Իրանում բանվորական շարժման մասին ստեղծված պատկերացումների խաբուսիկությունը:

«Մի բան էլ կա,— նկատում է նա,— իշխանության ուժն ու խորամանկությունը, գործարանի օգուտներում բանվորների մասնակցության մասին իր բարձրագույն խոստումներով քողարկում է այդ (կապիտալի և աշխատանքի—Լ. Շ) անտագոնիզմը»¹⁸:

Բանտարկյալների բանավիճում այս ծայրաբևեռ տեսակետների բախումն ավելի քան ճիշտ պատկերացում է տալիս գաղափարական այն սուր հակասությունների մասին, որը բնորոշ էր 60-ական թվականներին Իրանում ծավալված քաղաքական պայքարին: Մի կողմից՝ բուն թափ ստացած կապիտալիստական զարգացման պայմաններում բանվորական շարժման առանձնահատկության իրատես ընկալում, մյուս կողմից՝ այդ շարժման լիցքերի ժխտում:

Գաղափարական այս բանավիճը ճանաչողական այլ կարևոր եզրեր ևս ունի: Այստեղ դժվար չէ նկատել նաև գաղափարական այն էկլեկտիզմը, որով տառապում էին երկրում և արտասահմանում գործող զանազան կուսակցական խմբերն ու խմբավորումները:

«Սպիտակ հեղափոխություն» ծրագրով անցկացվող վերափոխությունների արդյունքների, դրանց բերած և խոստացած բարիքների նկատմամբ Իրանում դրսևորված դժգոհության ու տրամադրությունների մասին պատկերացումը գրողը ամբողջացնում է խոշոր հողատիրության — ներկայացուցիչներից մեկի վերաբերմունքով: Մուլուցքի հասնող ատելությունը է խոսում քարաշցի խոշոր հողատեր Զարզամֆարը հողային ռեֆորմի մասին, չվարանելով այն անվանել «մեծագույն դավաճանություն», որ «առնամալույծ է դարձնում Իրանի գյուղատնտեսությունը»:

Զարզամֆարը իր եղբոր հետ բանտ է ընկել, որովհետև չի հոժարել իր 60 միլիոն արժեցող հողը (ոհ՝ ալ թե թուման — հեգնում է հեղինակը) կառավարող կուսակցություններից մեկի գլխավոր քարտուղարին վաճառել: Նա անդրդվելի է մնացել նաև գլխավոր քարտուղարի հովանավոր մինիստրի հորդորներին՝ վաճառել հողը ու պըրծ-

նել «հողային ռեֆորմի գլխացավանքից»։ Դործել է կամայականութունը, չեն օգնել արդարադատական մարմիններին արված բողոքները։ Կամայականության մեխանիզմը կալվածատերը ինքն էլ է հասկանում։

«Դենում հմ դատախազի մոտ, տեսնեմ, ոնց որ դրա ականջին մի բան են փսփսացել։ Հաշտության մասին է խոսում ու նման բաներից»¹⁹։ Կպել են կալվածատիրոջ իրավունքներին, ու հանկարծ նա դարձել է ոչ ավելի, ոչ պակաս, ռայաթների կարեկից, իր կարեկցանքի խոսքում ակամայից բացահայտելով հողային ռեֆորմի «ծռուկությունները»։

«Խեղճեր, գլխներիս դարձել են հողատեր։ Էն էլ ինչ գլխացավանքներով, գրասենյակային քաշքշուկներով, վարչական հսկայական ծախսերով, որոնք ի վերջո՝ դժբախտների գրպաններից են քաշում, դեռ մի կողմ թողած հողի արժեքի ապառիկ վճարները, որ պետք է տան աչքները դուրս գալով»։

Կալվածատերը շարախնդում է պրոպագանդվող այն ծրագրի վրա, որով նախատեսվում էր մեքենայացնել գյուղատնտեսական արտադրությունը. «Ո՞վ կարող է իրագործել այդ։ Այս 2—3 միլիոն գյուղական ընտանիքները, որոնց երկու, երեք, ամենաշատը՝ հինգ հեկտար կտոր-կտոր արած հողեր են տվել։ Այդ դժբախտները ի՞նչ կարող են անել։ Նույնիսկ դրա համար դրամագլուխ չունեն։ Ասում եք նրանց վարկ կտան, ինչքա՞ն, ու նրանց ո՞ր տեղը կծածկի, համ էլ ինչի՞ վրա կմսխվի։ Նրանց մերկ ու տկլոր կին ու երեխային մի-երկու օր նոր բաներ կհագցնի ու մի ռադիո-տրանզիստոր կբերի թարեքին։ Նորից էն քաղցածությունն ու զատարկաձեռնությունը, մինչև կոկորդ հասնող պարտքը»²⁰։

Զարդամֆարը քամահրանքով է վերաբերվում հողային ռեֆորմի ծրագրերին, դրանց արդյունքում կանխատեսելով «սովի, խրոնիկական քաղցի» հեռանկար։ Այդ բարեփոխումների նկատմամբ իր ատելությունը թաքցնելու դիտավորությանը Զարդամֆարը չքմեղանքով վրա է տալիս. «Ձէ, մատաղ, ի՞նչ եք ասում։ Ես էլ եմ ասում, թե պապենական ոճից պետք է հրաժարվել։ Ոչ արբաբ, ոչ ռայաթ, այդ արդեն մեռավ-գնաց»։

Նա մանրամասնում է իր պատկերացումները երկրի «տնտեսության առողջության համար», ըստ իրեն, առավել ձեռնտու խոշոր հողատիրության զարգացման մասին։ Նրա կարծիքով, լավագույն ճանապարհը «գյուղի ավելորդ բնակչությունը» մորիլիզացնելու միջոցով խոպան հողերը յուրացնելն է, որը կարելի է իրագործել գյուղատնտեսական

բանկից տրամադրած վարկերի ու հողատերերից պարտադիր վերցված փոխառության միջոցով:

Ինչպես հայտնի է, երկրում գոյություն ունեցող ռեժիմն ու կարգերը փոխելու լուրջ, խնամքով մշակված իր ծրագրերն ունեւր նաև հոգևորականութունը: Հոգևորականության ղանադան խավերը ներկայացնող կազմակերպութուններից յուրաքանչյուրը յուրովի էր պատկերացնում այդ ծրագրերի իրագործման ուղիները:

Վիպակում, ինչպես պետք էր սպասել, շատ են հոգևորականության ներկայացուցիչները, անուղղակի վկայութուն 60-ական թվականներին թափ առած հոգևորական ընդդիմադիր շարժման ու կառավարող շերջանների՝ դրա դեմ ուղղված բռնության մասին: Նրանց մեջ կան և «Ֆեդայանե էսլամ» կազմակերպության անգամներ, որոնցից մեկը «...ասում են, մասնակցել է պրեմիեր մինիստր Հոսեյն Ալի Մանսուրի սպանությանը»²¹:

Այստեղ են հոմեյնիի երկերը վաճառելիս, կամ նրա անձնական հանձնարարությամբ դրանք Իրան փոխադրելիս բռնված գրավաճառներ, հոգևորականներ: Նրանք բանտում կազմակերպել են իսլամի օրենսդրության (Ֆիհհ) և ուսմունքի ուսումնասիրման դասընթացներ, լեզուներ են սովորում, անհրաժեշտության դեպքերում՝ միջնակարգի դասագրքեր սերտում: Նրանց մեջ հատկապես շատ են «Մեւլաբ էսլամ» կուսակցության անդամները, մեծ մասամբ երիտասարդներ: Նրանցից մեկը՝ Հոշաթին, նրա նկատմամբ յուրայինների ցուցաբերած հարգամեծար վերաբերմունքից դատելով, այդ կուսակցության դիրք ունեցող անդամներից մեկն է: Հեղինակը խնդրում է նրան պարզել Իրանում անցկացվելիք վերափոխութունների վերաբերյալ իր կուսակցության ծրագրերը:

Հոշաթին ուղղակի նշում է, որ իր՝ «Իսլամի ժողովուրդներ» կուսակցության նպատակն «Իսլամի իշխանության հաստատումն է», քանի որ իսլամի «ընդարձակ ու համակողմանի», «հավասարակշռված ու ճկուն» շիա ուսմունքը կարող է քաղաքակրթության հետ համաքայլ լինել: Որպես այդպիսի իշխանության տիպար նա մատնանշում է իսլամի նախնական շրջանում «ուղղափառների տիրակալ» (ամիր ալմումինին) Ալիի խալիֆայության ժամանակաշրջանը: Իր զրուցակցի այն հարցին, թե նրանք ինչպես են պատկերացնում իսլամի իշխանութունը ներկայիս համաշխարհային ասպարեզում իմպերիալիզմի և սոցիալիզմի գոյության պայմաններում և ունե՞ն արդյոք որոշակի պատկերա-

ցում այդ պայմաններում ստեղծվելիք պետականության քաղաքական, անտեսական, նյութական և մշակութային, գիտական անկախության հասնելու ուղիների մասին, Հոջաթին պատասխանում է. «Բհհարկև մենք այսօրվա աշխարհում ենք ապրում և ստիպված ենք նկատի առնել մարդկանց դասակարգային հակումները: Մենք ջանում ենք հասարակագիտական և տնտեսագիտական խնդիրներին տեղյակ լինել և այսօրվա գիտությունից օգնություն ստանալ: Մենք պայքարում ենք իմպերիալիզմի և դեմպուտիզմի դեմ, իսկ սոցիալիզմից ընդունում ենք այն, ինչը տեղավորվում է իսլամի սկզբունքներով կազմակերպվող հասարակության մեջ: Սակայն նորից եմ կրկնում, այս ամենը՝ իսլամի դրույթների շրջանակներում և հանուն իսլամի կատարյալ տիրապետության»²²:

Բազմազան ծրագրեր, բազմազան գաղափարներ: Դրանց ջատագովներից շատերը բանտ են ընկել, ձախողված պայքարի կամ մատնության հետևանքով: Նրանք այստեղ են բերել նաև իրենց դրսի տարածայնությունները: Բայց պայքարում ձեռք բերած որոշակի փորձը նրանց հուշում է միավորվելու անհրաժեշտության մասին: Այդ հարցը հուշում է բոլորին, հատկապես երիտասարդությանը: Միավորումը նրանք պատկերացնում են որպես իրենց բաժանող հակասությունների մոռացում «իրենց միմյանցից տարանջատող սահմանազատումներից հրաժարում»: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բհհադինը ուղղակի նշում է, որ ինքը արտակարգ կարևորություն է տալիս ընդդիմադիր ուժերի միավորման խնդրին և իր «պարտականությունն է համարում» ամեն պատեհ առիթով բանտարկյալների հետ կիսել իր նկատառումները. «Դուցե այս զնգանի չորս պատերի ներսում պայքարի միասնական սերունդ կազմավորվի»²³:

Այս ուսցիոնալ, ժամանակի աղգային-աղատագրական և հեղափոխական պայքարի փորձով իրեն արդարացրած գաղափարը հեղինակի համար կարևոր է դառնում իր երկրի երիտասարդությանը խնամակալ-հոգեբարձուների կեղծավոր մտահոգությամբ հանդես եկող գաղափարական դաստիարակների ազդեցությունից հեռու պահելու տեսակետից: Իսկ թե որքան շատ էին դրանք երկրում ամերիկյան իմպերիալիզմի ամենակալության, իրանական պաշտոնական մամուլի՝ քանադորության պայմաններում, առաջադեմ գրողը ավելի քան լավ գիտեր:

Բհհադինը, որ ամբողջ վիպակում հազվադեպ է ուղղակի միջա-

մտում շրջապատի գրույցներին ու վեճերին, իր վերաբերմունքը մեկուսի, ներքին մենախոսության միջոցով արտահայտելով, առիթը բաց չի թողնում ընդառաջ գնալ միավորման թեմայի շուրջ բացված գրույցներին, լինի դա «Խալամի ժողովուրդներ» կուսակցության, թե «Խալամի մարտիկներ» կազմակերպության անդամների հետ:

Երկրի ընդդիմադիր ուժերի համախմբման լավագույն ձևը նրան պատկերանում է բլոկի՝ ճակատի ձևով: Ճակատ, որը պետք է հիմնվի նրանց բոլորի համար ընդհանրական նպատակների վրա. պայքար հանուն ազատության, ընդդեմ բռնակալության, իմպերիալիզմի: Գրողի այս նկատառումներում դժվար չէ նկատել Իրանի՝ 60-ական թվականներին այսպես կոչված «Երկրորդ ազգային ճակատի» հուսադրիչ գործունեության արձագանքները: Սակայն պատահական չէ, որ հեղինակը մերժում է գաղափարական կոմպրոմիսի գնով միավորումը: Այդպիսի միավորման տխուր օրինակն արդեն իրողություն էր ի դեմս «Իրանական սովորողների և ուսանողության համաշխարհային կոնֆեդերացիայի» (Ազգային միություն), որի պառակտման պատճառներից մեկը գաղափարաքաղաքական տարանջատվածությունն էր²⁴:

Վիպակը որոշակի պատկերացում է տալիս գաղափարական որոնումների մասին, որոնք բնորոշ էին այդ շարժմանը, որոնումներ, որոնք բարդանում էին զանազան քաղաքական էքստրեմիստական տեսությունների չմարսված ազդեցությամբ: Այսպես, հեղափոխության շարժիչ ուժերի և իրագործման ուղիների վերաբերյալ վերը հիշված բանավեճը ասես կրկնում է «Արտասահմանում Թուրք կուսակցության հեղափոխական կազմակերպության» և «Թուֆան» խմբավորման կոնֆլիկտը՝ որտեղից սկսել հեղափոխությունն Իրանում հարցի առթիվ: Ի դեպ, առաջինի բանտում գտնվող անդամներից մեկը հեղինակին ուղղակի հայտնում է իրենց այդ կոնֆլիկտի մասին: «Թուֆանը», ինչպես հայտնի է, հանդես գալով շեշտված մատիստական գիրքորոշմամբ, այն տեսակետին էր, թե հեղափոխությունը պետք է սկսել գյուղից, ծովալի ծայրամասերում և վերջում միայն ներառնել քաղաքները²⁵: Պրոլետարիատի՝ որպես հեղափոխության շարժիչ ուժի ժխտման այս տեսակետից զատ, վիպակում արտացոլում են ստացել բանտարկյալ երիտասարդների մատիստական այլ հայացքներ ևս:

Այսպես, ԱՄՆ-ի հետ 1960-ական թվականների վերջերին ՄՍՀՄ-ի բարելավված հարաբերությունները բանտարկյալներից ումանք չեն վարանում որակել «գերմեծ տերությունների գործարք»: Պատահական չէ,

որ հետագայում իրանի ժողովրդական կուսակցությունը (Թուդե) սուր հակահարված տվեց այդ գաղափարներին, րացահայտելով իրանում գործող մառական զանազան խմբավորումների կեղծ հեղափոխական էությունը, որոնք պառակտում էին դիմադրողական շարժումը, ի վերջո թուլացնում հակամիապետական և հակաիմպերիալիստական պայքարը²⁶:

Անհրաժեշտ է նշել, որ նման գաղափարական դրսևորումները վիպակում առանց ընդդիմախոսություն չեն մնում: Բանավեճերից մեկի ժամանակ երիտասարդներից մեկը, ինչպես՝ Բեհազինը, է բնորոշում «լաջուշանե» (կամակորաբար) կրկնում է ՍՍՀՄ-ի դեմ մառիստների հերյուրանքներից մեկը: Նա բարբառում է, թե ՍՍՀՄ-ը «միջազգային ասպարեզում այլևս այն հեղափոխական ուժը չէ», որ նա կանգնած է «հեղափոխության ճանապարհին» (իմա՝ արգելակում է հեղափոխական շարժումները): Նրան համոզիչ առարկում է իրանական Ադրբեջանի Դեմոկրատական Կուսակցության անդամ, հեղափոխական պայքարի մարտիկի գաղափարները բանտում թրծած Մոթամադիանը: Հիշելով քաղցր պտուղների պատճառով քարակոծ ու ճշակոտոր դարձող թթենու այլաբանությունը, նա դառը ժպիտով նկատում է. «Ուրեմն և Իսրայելն է ժողովուրդների թշնամին, որը խլում է արաբների հողերն ու երկու միլիոն արաբների խփում, թափառական է դարձնում, և Սովետը, որ կանգնում է, Անվտանգության խորհրդում անց է կացնում դեկլարացիա ու բացի քաղաքական պաշտպանությունից զինվորական, մշակութային ու տնտեսական օգնություն ցույց տալիս նրանց»²⁷:

Մառական գաղափարների նկատմամբ իր վերաբերմունքը Բեհազինը արտահայտել է սպանիչ երգիծանքով գծված մի երիտասարդի կերպարով: «Այս բարձր ճակատից ու լայն դեմքից, այս հաստ ու մկանուտ վզից ուժ է թափում: Լայն կուրծք ու հեղափոխականի փակօձիք բաճկոնի տակից գեղագծվող կլորիկ որովայն: Իզուր չէ, որ տղերքը նրան «ընկեր Մառ» են ասում»²⁸: Իր հռչակավոր նախատիպին շարժումներով անգամ կապկում է տեսության «ակունքներից ջուր խմող» երիտասարդը: Նրա մեջ «եսը» այնքան է պալարվել, որ էլ տեղ չկա»: Այս դիմանկարում նաև շրջապատի հակակրական մերժողական վերաբերմունքի անդրադարձումը կա հեղափոխության կոկոզավիզ «տեսաբանի» նկատմամբ: Բեհազինը պատահական չի գործածում այստեղ պալարվել (ամաս քյարդան) արտահայտությունը: Օտարամուտ, պալարանման գաղափարական այս հովերը, որքան էլ ազդեցիկ, սոսկ հո-

վեր էին: Հեղինակը բանտի երիտասարդների մեջ տեսնում էր մի թւարմ շունչ, որը թեև բոլորովին նոր, բայց զորեղանալու նշաններ ուներ:

60-ական թվականներին նոր միայն կազմավորվող երիտասարդական խմբերն ու խմբավորումները քաղաքական, գաղափարական և պրակտիկայի իրենց որոնումներում ակնդետ հետևում էին աշխարհի շուրս ծայրերում ծավալվող ազգային ազատագրական, դեմոկրատական շարժումներին, վերջիններիս հաջողված փորձից դասեր առնելու հետ մեկտեղ պայքարի ներշնչանք ստանալով: Հայտնի է, որ Թեհրանի համալսարանի ուսանողների գաղտնի խմբավորումներում ուսումնասիրում էին Զինաստանի, Վիետնամի, Կուբայի և Ալժիրի փորձը, թարգմանում Ֆ. Կաստրոյի, Զե Գևարայի և միջազգային հեղափոխական շարժման այլ հայտնի գործիչների երկերը²⁹:

Ազգային-ազատագրական, դեմոկրատական, հեղափոխական շարժումների փորձի ճանաչումն իր հետ չէր կարող չբերել նաև համերաշխվելու ձգտում, չցանկ ինտերնացիոնալիզմի սերմեր: Այս տրամադրությունների առաջին վսու արտացոլումը կա վիպակ-հուշագրությունում:

Բանտ են| բերվել երեք երիտասարդ, որոնք բռնվել են Իրանի սահմանագլխին: Նրանք նպատակ են ունեցել «անցնել Իրաք, հետո պաղեստինցիների հետ միանալու և Իսրայելի վրա հարձակվելու համար»³⁰: Երիտասարդների այս շարժումը (որն ի դեպ ՍԱՎԱՔԻ պրովակատորների թափանցմամբ ձախողվել էր) հեղինակը կոչում է «Նոր օրվա լուսավոր ուրվագիծ»: Ի դեպ, հայտնի է, որ սովորողների և ուսանողների համաշխարհային կոնֆեդերացիան սերտ կապեր ուներ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության հետ, որն առաջինին օգնություն էր ցույց տալիս պարտիզանական կադրերի պատրաստման գործում³¹:

Վիպակում «Նոր օրվա լուսավոր ուրվագիծ» հայտածման մի այլ նշանակալից վկայություն ևս կա: Քաղաքականների բանտում լուր է հասնում Զիլիի պառլամենտական ընտրություններում ժողովրդական միասնության դաշինքի հաղթանակի, այդ դաշինքի առաջադրած սոցիալիստ-մարքսիստ թեկնածուի (Ս. Ալլենդեյի—Վ. Շ.) հանրապետության նախագահ ընտրվելու մասին: Ցնծում են բանտարկյալները, հատկապես «Զինվորական կազմակերպության» սպաները: Այդ հաղթանակը նրանց հույս է ներշնչում: Անմիջապես հիշում են Բոլիվիան, Պերուն, Վենեսուելան: Գուցե հնարավոր լինի այդ երկրներում ևս պառ-

լամենտական պայքարի միջոցով իրագործել հակաիմպերիալիստական, դեմոկրատական շարժման նպատակները:

Այդ ոգևորութւյան վրա ասես սառը ջուր է լցնում գիլանցի երիտա-սարդի ռեպլիկը. «Փոռչ, հավատալս չի գալիս, տեսնես ինչ ֆանդ կա մեջը»: Առանց ականջ դնելու «դեմոկրատիայի նկատմամբ արմատա-ցած հավատի», «արհեստակցական կազմակերպութիւնների բավարար ուժի» որոշիչ գործոնների վերաբերյալ ընկերների փաստարկներին, գի-լանցին համառորեն պնդում է. «Գուցե և այդպես է, չգիտեմ, բայց ես փնտրում եմ, տեսնեմ հրացանն ու դնդացիքը ում ձեռքին է»³², Գիլե-մարդի այս խոսքերը ասես սթափեցնում են բանտարկյալներին առա-ջին ոգևորութիւնից:

Նրանք փորձում են առարկել, թե նժարը հօգուտ դեմոկրատական ուժերի ծանրանալու դեպքում «իշխող դասակարգերի կողմիցիայի ա-մեն մի դիմադրութիւն կարող է իզուր, ինքնասպանութիւն նման լի-նել»: Անդրդվելի է գլուղացի երիտասարդը, և նրա համառ փաստարկ-ներին ի լուր ներկաները մտաբերում են հեռու և մոտիկ պատմական անցյալի դասերը՝ Փարիզյան կոմունա, Ինդոնեզիա: Նորից հետևում է գիլանցու խոսքը. «Դուք ասում եք, տեսութիւն կա, դրա իրագործումը պատրաստութիւն է պահանջում, ջանք է պահանջում: Գործը պետք է պատրաստել և նյութապես, և գաղափարապես: Քանի որ հակառակորդը մարզված է, գործի սանձերը ձեռքին են, դրամը, եկամտի աղբյուր-ները, կառավարական հիմնարկները, բանկը, արտաքին կապերը... Նրան չպետք է ժամանակ տալ ուշքի գալու կրած հարվածից: Պետք է նրա եղունգներն արմատից կտրել, կայունութիւն բոլոր հնարավորու-թիւնները պետք է նրանից խլել»³³:

Այսօր արդեն պատմութիւն դաժան իրողութիւնամբ հաստատված զարմանալի հեռատեսութիւն (հիշենք, որ այս խոսքերը ասվում էին 1971 թ.): Բայց այս հեռատեսութիւնը պատճառաբանված է հնչում մի քաղաքական բանտարկյալի շուրթերին, որն իր ծննդավայր Գիլա-նում 1921 թ. ճնշված ջանգալիների շարժման դասերին մանկուց տ-կանջալուր լինելու հնարավորութիւն էր ունեցել և հեղինակի բնո-րոշմամբ «իր գլուղի դասակարգային բախումներում» էր ստացել իր հեղափոխական թրծվածքը:

Ակներևաբար, գիլանցին բանտում և բանտից դուրս հեղինակի ճանաչած հեղափոխականների հավաքական կերպարն է: Խիստ ժլատ, բայց դիպուկ նկատված մի քանի գծերով ընթերցողը տեսնում է նրա «շոշափելիութիւն» չափ կենդանի» կերպարը: «Համա տաքերբան է

այս գիլանցին: Կարճահասակ է, քիչ կեռ քթով: Նրան կարելի է հեռավից ճանաչել բերանի անկյունից անպակաս շրտվածով: Շարունակ ծամում է այն, երբեմն խոր փոք տալիս ու քանի որ աչքերը շրտվածին հառելու սովորություն ունի, շիլ է թվում»³⁴:

Վեճի մեջ գիլանցին գլաքարի է նման, որին «ձեռք տալ կլինի, բայց ատամին տալ՝ ոչ»:

Բեհագինը շէր կարող չստեղծել ժողովրդական զանգվածներից սերված, դասակարգային պայքարի կոփվածքով և հեղափոխական առաջադիմական տեսություններով զինված մարտիկի այսպիսի մի կերպար:

Դատելով բանտային հանդիպումների ու զրույցների վերաբերյալ նրա խոհ-մենախոսություններից, Բեհագինին խորապես մտահոգում էր իրանում օրավուր աճող ընդդիմադրության շարժման ապագան: Դադափարապես ու կաղմակերպականորեն տարանջատ էր այդ շարժումը, բայց, ինչպես գրողն է պնդում, եռակցվելու էր, քանի որ սնվում էր «ժողովրդի արմատներ ունեցող ցասումից»:

Նա ուներ ժողովրդի կամքի արտահայտչի, այդ կամքին կյանքը նվիրաբերող մարտիկի գեղագիտական իր իդեալը, որը մարմնավորել էր դեռևս 1940-ական թվականներին գրված «Գյուղացու աղշիկը» վիպակի հերոս Ահմադ-Գուլի կերպարում³⁵, հեղափոխական ռոմանտիկայի շնչով ստեղծված «Ազատագրվեցեք», «Իրանական գորգ» արձակ բանաստեղծություններում:

Պատմությունը կրկնվում էր: Երկրում խմորվում էր նոր հեղափոխություն: Բեհագինը նորից գրական կյանքի պիտի կոչեր իր գեղագիտական իդեալը, որն այս անգամ հենվում էր ոչ միայն պատմության, այլև արդիականության դասերին:

Պարսից արդի պոեզիայի մասին բանտարկյալների խնդրանքով իր կարդացած դասախոսություններից մեկում Բեհագինը այսպես է բնորոշում գրականության, գրողի պարտքը ժողովրդի նկատմամբ՝ «Մարդկանց կողքին լինել, նրանց մեջ կենդանացնել հույսը, բացել նրանց աչքերը գեղեցկության և ճշմարտության նկատմամբ, որովհետև ճշմարտությունը ուժ է, գեղեցկությունը ուժ է»³⁶: Բեհագինը ուներ իրավունք ասելու այս խոսքերը, քանի որ նա ստեղծել էր մի երկ, որը գորու էր իր հայրենակիցներին ճանաչել տալ 70-ական թվականների սկզբի Իրանը իր հակասություններով ու հույսերով, խմորվող տրամադրությունների այն լիցքերով, որոնք պիտի առաջիկա հեղափոխական իրադրությունը նախապատրաստեին:

ОТРАЖЕНИЕ РЕВОЛЮЦИОННЫХ НАСТРОЕНИЙ В МЕМУАРНОЙ ПОВЕСТИ ИРАНСКОГО ПИСАТЕЛЯ БЕХАЗИНА «ГОСТЬ ЭТИХ ГОСПОДЬ»

Резюме

В основу повести Бехазина легли его воспоминания из тюрьмы, куда он в 1970 г. был брошен шахскими властями по поводу составления и подписания протеста-заявления «Общества писателей Ирана» в связи с арестом известного прозаика Ф. Тонкабони.

Писатель день за днем представляет свои встречи, беседы с заключенными, передает их споры по различным социально-политическим проблемам страны, международной жизни. Среда заключенных представляет как бы микромир политической жизни Ирана начала 70-х годов. Многоголосен этот мир, и в его многоголосии отражаются не только идейно-политические настроения различных течений иранского движения сопротивления, но и противоречивость, организационная раздробленность самого движения.

Повесть даст отчетливое представление и об одной характерной тенденции, проявленной к началу 70-х годов: перебороть раздробленность, вплотную на основе объединяющей все течения цели: борьба за свободу, против шахского деспотизма, империалистического насилия.

Все это, подкрепленное реалиями исторических событий времени и страны, придает большую познавательную значимость повести Бехазина.

Писатель имел право декларировать долг творцов слова: «Быть рядом с народом своим, открыть ему глаза на красоту, на правду. Ибо красота это сила, правда—сила».

Повесть «Гость этих господь» подтверждение этого гражданского творческого кредо Бехазина.

1 Բեհազին, Մեհման ին աղայան, Քեհրան, 1350/1971 (այսուհետև՝ Մեհման ին աղայան): «Հարսին»—Բանտային եղբերգությունների զիրք: Այսպես էր վերտառված ադրբեջանական դպրոցի պարսկալեզու բանաստեղծ հաջանի Շիրվանիի (1120—1199)՝ բանտում գրված, բռնություն ու սոցիալական անարդարությունը դատապարտող քասիդների ժողովածուն:

2 Ֆերիդուն Քոնքարունին սկսել է ստեղծագործել 60-ական թվականների սկզբին: Հեղինակ է «Մարդը վանդակում» (Մարդի դար դաֆաս), «Հողի գերին» (Ասիրե խաբ), «Շախմատային զինվոր» (Փիագեն շաթրանջ), «Խավար գիշերվա

- աստղերը» (Սեթարեհայն շարե թրե) և «Նոթեր աղմկոտ քաղաքից» (Յադ-դաշթհայն շահրե շուուդ) գրքերի: Բանտարկվել էր պատմվածքների վերջին ժողովածուի հրատարակման առիթով: Ընդ որում այդ ժողովածուի՝ բանվորական շարժման թեմայով գրված «Սթափում» պատմվածքը նվիրված է Բեհադինին:
- 3 Այս ստեղծագործության մասին տե՛ս Գ. Օ. Мовсисян, Творчество Бозорга Аляви, Ереван, 1980, с. 28—29.
 4. Связь пелену тумана, М., 1977, с. 7; Л. С. Гиунашвили, Крестьянский вопрос в современной персидской прозе. Тбилиси, 1977; Дж. Х. Дорри, Современная персидская сатирическая проза, М., 1977.
 - 5 «Սոխան», 1971, թիվ 11.
 - 6 Մեհմանե ին աղայան, էջ 9.
 - 7 Նույն տեղում, էջ 21 (Թարգմ. Լ. Շ.):
 - 8 Նույն տեղում:
 - 9 Սադեմանե էնդելարին հեղրե Թուրե գար խարեշ:
 - 10 Կազմակերպությունը 1966 թ. հիմնել են Թուրեից հեռացած երիտասարդական սեկցիայի անդամները: Տե՛ս E. New Jersey, 1983, p. 454.
 - 11 Մեհմանե ին աղայան, էջ 57.
 - 12 Լրիվ անվանումը «Իրանական ազգի՝ պանիսլամիզմի հիմունքներով կուսակցություն»:
Հիմնադրվել է 40-ական թվականների վերջերին: Տե՛ս Иран, () 1901, М., 1975. Ե. 80: E. Abrahamian, նշված աշխ., էջ 457.
 - 13 Մեհմանե ին աղայան, էջ 28.
 - 14 Նույն տեղում:
 - 15 Նույն տեղում, էջ 114.
 - 16 Նույն տեղում:
 - 17 Նույն տեղում:
 - 18 Նույն տեղում:
 - 19 Նույն տեղում, էջ 97—98.
 - 20 Նույն տեղում, էջ 121.
 - 21 Պրեմիեր-մինիստրը սպանվել էր 1965 թ. հունվարին «Ֆեդայանե էսլամ» կազմակերպության անդամներից մեկի ձեռքով: Տե՛ս М. С. Иванов, Иран в 60—70-х годах XX века. М., 1977, с. 161.
 - 22 Մեհմանե ին աղայան, էջ 93.
 - 23 Նույն տեղում, էջ 94.
 - 24 А. Г. Данишян, Иранские молодежные организации в странах Западной Европы (1960—70-е годы), Всесоюзная школа молодых востоковедов. Тезисы, т. I, ч. I, М., 1982.
 - 25 E. Abrahamian, նշված աշխ., էջ 454.
 - 26 Զ. Մ. Ջավանշիր, Մաոիզմ վա բազմաթիվ ան դար Իրան (Մաոիզմը և նրա արձագանքները Իրանում) Բ. չ. 1353 (1974—1975):
 - 27 Մեհմանե ին աղայան, էջ 101.
 - 28 Նույն տեղում, էջ 143.
 - 29 E. Abrahamian, նշված աշխ., էջ 482.
 - 30 Մեհմանե ին աղայան, էջ 144.

- 31 E. Abrahamian, *Խշմած աշիւ.*, էջ 483.
- 32 Մեհմանն ին աղայան, էջ 146.
- 33 Նույն տեղում, էջ 148.
- 34 Մեհմանն ին աղայան, էջ 145.
- 35 Վիպակը 1921 թ. Գիւլանի Հեղափոխութեան շարժման միակ գեղարվեստական արտաշնչումն է պարսից արձակում: Վիպակի մասին մանրամասն տե՛ս Л. С. Гиунашвили, Крестьянский вопрос в современной персидской прозе, Тбилиси, 1977, с. 35—50.
- 36 Մեհմանն ին աղայան, էջ 71.